ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/40685-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1171-17.10.2025-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխության վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի 2-րդ հոդվածով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 12.1-ին կետի համաձայն. «12.1) մշակում և հաստատում է սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով նախատեսված մարմիններում և կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը, որը ներառում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման շրջանակը, չափորոշիչները, գործիքակազմը, հրապարակում է գնահատման արդյունքները, մարմինների առաջարկով՝ նաև վերջիններիս կողմից ներկայացված կարծիքները.»:

Հարկ է նկատել, որ Հանձնաժողովը հրապարակում է ինչպես հանրային իշխանության մարմիններում, այնպես էլ որոշ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքները: Մինչդեռ մեջբերված դրույթով Հանձնաժողովին լիազորություն է վերապահվում հրապարակել միայն մարմինների կողմից ներկայացված կարծիքները՝ վերջիններիս առաջարկով: Ուստի առաջարկում ենք Նախագծի մեջբերված դրույթում «մարմինների» բառից հետո լրացնել «և կազմակերպությունների» բառերը՝ այդպիսով ապահովելով նաև կազմակերպությունների կողմից ներկայացված կարծիքների հրապարակայնությունը:

2. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «ենթաօրենսդրական ակտն» բառերը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասում «ենթաօրենսդրական իրավական ակտն» բառերն առաջարկում ենք փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված հասկացությունը, ինչպես նաև նույն օրենքի

15-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պահանջը, որի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:»:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ